դրպրոցում, որ գտնուում է Խալկի կղզում, և բաղկացած է 7 դասարանից, կան ուսուցիչ՝ 13, ուսանող՝ 81։ Գիմնազիաներ կան արականների՝ 3, աղջկանց՝ 4։ Քաղաքում կար և մի օտար լեզուների և առևտրական դպրոց։ Տարրական դպրոցները քաղաքային և ժողովրդական՝ 64 և մասնաւոր՝ 5։ Ուսուցիչներից 167-ը սովորեցնում էին միջնակարգ դպրոցներում, 257-ը քաղաքային և ժողովրդական և 87-ը մասնաւոր դպրոցներում. աշակերտներից 3425-ը միջնակարգ դպրոցներում (1480 արական 1945 իգական, 12,401 քաղաքային և տարրական դրպրոցներում (6443+5213) և մասնաւոր դպրոցներում՝ 805 (430+375)։

Փոխադարձ այցելութիւններ. Տեղի ունեցաւ Ցունվարի մէջ յոյն տիեզերական պատրիարքի և անգլիացոց դեսպանի փոխադարձ այցելութիւն, այժմ էլ, ինչպէս հաղորդում է Церк. Вѣст.-ը, փոխադարձ այցելութիւն է տեղի ունեցել Ռուսաց դեսպան Чарыковъ-ի հետ. ինչպէս առաջին, նոյնպէս և այս այցելութեանը մեծ կարևորութիւն են տալիս յոյն լրագրները յոյն պատրիարքարանի ընթացիկ գործերի առիթով։ Церк. Вѣст.-ը գրում է. «Լրագրները ուշադրութիւն դարձրին և այն անսովոր յարգանքի վերայ, որը ցոյց տրուեց Նորին Սրբութեան Ցովակիմ պատրիարքին՝ ռուս դեսպանատան մէջ։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Վատիկանի յարաբերութեան կարգաւորուելը. Ռուսիայի հետ

Լրագրներում (Кавказъ—№ 54) կարդում ենք Պետերբուրգի հեռագրական գործակալութեան հեռագիրը հետևեալ բովանդակութեամբ.

Հռովմէական կուրիան վերջին ժամանակներս իւր որոշումները հրատարակում էր միայն իւր պաշտօնական օրգանում, այդ որոշումները պարտաւորական համարելով բոլոր հռովմէական կաթոլիկ հոգևորականութեան համար։

Ներքին գործերի նախարարութիւնը նախազգուշացրեց Կուրիային, որ եթէ կայսերութեան մէջ եղող Հռովմէական–կաթոլիկ եպիսկոպոսներին Վատիկանի կարգադրութիւնները չուղարկուեն ռուս կառավարութեան միջոցով, այն ժամանակ այդ գործողութիւնը, համարելով անհամապատասխան ռուսական օրէնքներին, կը ճանաչուի անվաւեր։ Այս բանը հաղորդուեց կայսերութեան մէջ եղող հռովմէական կաթոլիկ եպիսկոպոսներին էլ, նախազգուշացնելով, որ նրանք, որոնք կը գործադրեն կառավարութեան հաւանութիւնը չստացած և Կուրիայից բղխած կարգադրութիւնները, խիստ պատասխանատուութեան կենթարկուեն։

Այժմ հռովմէական Կուրիան յայտնել է Ս. Գահի մօտ եղող ռուսական դեսպանին, որ իւր վերև յիշուած «Acta Apostolicae Sedis»-ը այսուհետև կը ներկայացուի կայսերական դեսպանատանը։ Ներքին գործերի նախարարութիւնը յայտնեց այս կաթոլիկ եպիսկոպոսներին ծանուցանելով, որ յիշուած ժողովածուի օրինակները կուղարկուեն նրանց նախարարութեան ձեռքով, և Վատիկանի այդ ժողովածուի մէջ եղած կարգադրութիւններից պէտք է գործադրուեն այն ակտերը, որոնց կիրառութիւնը Ռուսիայում կը թոյլատրուի Բարձրագոյն բարեհաճութեամբ։

—※ ※—